Հայրենիքը, թերեւս, նախ եւ առաջ լեզուն է

Դարեր ի վեր մեր նախնիները կենաց ու մահու կռիվ են տվել հանուն մեր Հոգեւոր Հայրենիքի, հանուն մեր Ոսկեդենիկ, Մեսրոպաշունչ մայրենիի՝ նրանից չզիջելով եւ ոչ մի հնչյուն: Իսկ հիմա՞, հիմա, երբ մեր գլխին կախված յաթաղան չկա, ու մեր դիմաց՝ հարբած փղերի զորագունդ, ինչպե՞ս ենք մեր հասարակական կյանքում կրում ու պահում մեր Լեզու-Հայրենիքը: Խոհեմաբար խոստովանենք՝ վատ ու անարժանապատիվ

Մենք անհատական, հրապարակային եւ պաշտոնական լեզվագործածության մեջ կամովին ու հաշտ զիջում ենք մեր լեզվի դիրքերն ավերիչ, անգլիաշեշտ խառնախոսությանը եւ խառնագրությանը: Սա էլ ստեղծում է ցածրաճաշակ լեզվամշակութային միջավայր, հասարակական ճաշակ ու վտանգավոր հոգեբանություն՝ երիտասարդության շրջանում վտանգելով մեր Լեզվատունը, մասնավորապես ավագներիս մեղքով ու բացթողումներով:

Մեր լեզուն անաղարտ կրելու պատվախնդրության եւ ինքնահարգանքի պակաս կա այսօր մեր մեջ: Ինչո՞ւ: Ի՞նչ իրավունքով: Ի՞նչ բարոյականությամբ...

Սա վտանգավոր իրողություն է. խոստովանելու խոհեմություն եւ համարձակություն ունենանք. մե՛ր իսկ մեծ բացթողումների հետեւանքով: Ունենք, այո, մշակութային եւ կրթական պետական քաղաքականություն: Սակայն 21-րդ դարի հոգեւոր-իմացական մրցակցության արդի պայմաններում, երբ գերտերությունների թելադրանքը սպառնում է փոքր ժողովուրդների ազգային մշակույթների եւ ինքնության պահպանմանը, օրախնդիր անհրաժեշտություն է առավել գործուն եւ առավել արդյունավետությամբ կիրառել նաեւ հասարակական լայնածավալ ամբիոններ, ազդեցիկ մեխանիզմներ եւ ռազմավարական տեխնոլոգիաներ, հեռուստատեսային հզոր մեքենան:

Հարկավոր է ելք փնտրել ստեղծված իրավիճակից
:
Լեզուն ունի պետական ու քաղաքական ռազմավարական նշանակություն, ուստի պետական լեզվի իրավական պաշտպանվածության խնդիրը լուծում է պետությունը՝ իրականացնելով որոշակի լեզվաքաղաքականություն, որը պետության կողմից անմրցակից գործառությամբ լուծում է ազգային անվտանգության եւ ազգապահպանության խնդիր: Պետականի կարգավիճակ ունեցող լեզուն պաշտպանված է օրենքով, եւ նրա իրավունքները խախտողներն ու անտեսողները, օրենքով նախատեսված կարգով, ենթարկվում են պատասխանատվության:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքով ամրագրված է՝ հայոց լեզուն ՀՀ միակ պետական լեզուն է, որի օրինական շահերը պաշտպանված են օրենքով: ՀՀ քաղաքացին պետական լեզվով տեղեկույթ ստանալու իրավունք ունի...

Հասկանալի է, որ լեզվագործածության ձեւախեղումը կենցաղում անհատական հարց է: Սակայն լեզուն նաեւ հասարակական երեւույթ է: Հասարակության կողմից պաշտոնական եւ հրապարակային լեզվագործածությունը ենթակա է պետական եւ հասարակական վերահսկողության, քանի որ պաշտոնական եւ հրապարակային լեզվագործածությունը ձեւավորում է հասարակական ճաշակ, հոգեբանություն եւ գիտակցություն, արծարծում ազգային հոգեւոր անվտանգության խնդիրներ:

Ըստ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի 31-րդ հոդվածի՝ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը: Իսկ ի՞նչ պատկեր է մեր

հասարակական կյանքում: Հրապարակային, հեռուստատեսային լեզվագործածության մեջ պահպանվո՞ւմ են, արդյոք, քաղաքացիների, հանրության եւ պետության իրավունքները եւ օրինական շահերը

Ակնհայտ իրողություն է, որ զանգվածային միջոցառումներում, պաշտոնական խոսքում, հրապարակային գրվածքներում, գովազդային պաստառներում, ցուցանակներում ու տեսահոլովակներում, մի շարք հեռուստաալիքներում շարունակաբար տեղի են ունենում լեզվական իրավախախտումներ, այն է՝ չեն պահպանվում գրական հայերենի նորմերը, ՀՀ քաղաքացիների՝ պետական լեզվով տեղեկույթ ստանալու սահմանադրական իրավունքը՝ պետական կառավարման սահմանված կարգը, ոտնահարվում է հայերենի՝ ՀՀ միակ պետական լեզուն լինելու՝ Սահմանդրությամբ ամրագրված կարգավիճակը

Մեզ ճանաչելու եւ մեր հարատեւելու բանալին, հիրավի, մեր լեզուն է, մեր գրավոր մշակույթը, Մաշտոցի սխրանքով սկզբնավորված «պատմաքաղաքական խաղը, որում պարտվելու իրավունք չունենք» (Պ. Սեւակ)

Ի՞նչ անել: Ճգնաժամը հաղթահարելու համար, որպես կանոն, զորակոչվում է գրականությունը, բարձր մշակույթը, որ բարոյական կրթության կաճառ է: Քերթությունը ազգային Ոգու լիցքավորիչ-մարտկոց է: Գրականությունը վերելքի ճանապարհ է՝ սերնդից սերունդ, սերունդների միջով ու սերունդների միջոցով...

Այն մեր երակների մեջ պայքար է մեր գենի համար, բարձրի ու համամարդկայինի համար: Մեր քերթությունը, գրականությունը, մեսրոպաբարբառ Ոգին մեր ժողովրդի կենսատու եւ կենսառաք ավիշն են, հայկական մշակույթի ու քաղաքակրթության, մեր լինելության հզոր հիմքը, մեր լեզվի բարձրագույն դրսեւորումը:

Ահա թե ինչու այսօր դրանք մեր հասարակական կյանքում պետք է հզորացնել պետական նպատակամետ, առավելագույնս արդյունավետ քաղաքականությամբ: Ահա, թե ինչու երիտասարդության փիլիսոփայության, կենսապայքարի ատաղձը ազգայինը, ազգայինի ուսմունքը պիտի լինի, որը խտացած է մեր գրականության մեջ. ուշադրություն դարձնենք՝ ազգային ոգին, արմատների գիտակցությունն անխառն ու առավել մաքուր պահպանվել է մեր գրականության մեջ:

Սա պատմաբարոյական-պատմաքաղաքական բացառիկ կարեւոր իրողություն է, որը ազգային հոգեւոր անվտանգության առանցքային երաշխիք է եւ պետական ռազմավարական հատուկ կարեւորության հիմնախնդիր:

Ահա թե ինչու է անհրաժեշտ առանձնահատուկ տեղ տալ երիտասարդների միջոցով եւ երիտասարդության համար արդյունավետ քաղաքականության իրականացմանը՝ նորատիպ արտահայտչաձեւերով կազմակերպելով մեր Ոսկեղենիկ Լեզվի եւ Ազգային Ոգու բարձրագույն դրսեւորման՝ մեր քերթության, մեր գրական մշակույթի ներգործուն շարունակական քարոզը, որը պիտի առավել ամրապնդի պետական լեզվի՝ գրական հայերենի դիրքերը, մեր Հոգեւոր Հայրենիքի եւ մեր պետականության դիրքերը`՝ մշտապես անսալով սեւակյան սթափության իմաստուն կոչնակներին, որ՝

Մարտից հետո միշտ էլ

Լեզուն են մարտադաշտ հանում,

Եվ ինչ չի կարող ոչ մի զորք անել,

Լեզուն է անում:

Նադյա ԱՆՏՈՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, Մեսրոպ Մաշտոցի անվան խոսքի մշակույթի կենտրոնի ղեկավար